



Harmonic Society” Armenian Association of Social Workers
«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական

«Ներդաշնակ հասարակություն»
Սոցիալական աշխատողների ասոցիացիա, ՀԿ
Գործունեության հաշվետվություն
2004-2005թթ

Նախաբան

Սոցիալական աշխատողների ասոցիացիա ստեղծելու անհրաժեշտությունը վաղուց Հայաստանում կար, քանի որ չկար նման մի կառույց, որը կպաշտպաներ երկրում սոցիալական աշխատողների իրավունքները և կգնահատեր սոցիալական աշխատողների և նրանց շահառուների կարևորությունը: Ասոցիացիայի ստեղծումը թույլ կտար՝ լուծելու այդ խնդիրներն ու հաղթահարել մասնագիտական մարտահրավերները:

Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիայի ստեղծման գաղափարը պատկանում է ինձ, Մանանեի Պետրոսյանին, Նունե Գեղամյանին, Աննա Ստեփանյանին և Գայանե Սարիբեկյանին:

Այսպիսով, Ասոցիացիան հիմնադրվեց 2004թ-ին Երևանում՝ պետոեզիստրում գրանցվելով որպես ոչ պետական, ոչ քաղաքական և ոչ առևտրային կազմակերպություն:

Դրվեցին հետևյալ խնդիրները.

- զարգացնել սոցիալական աշխատանք մասնագիտությունը
- աջակցել սոցիալական աշխատողներին՝ հաստատելու իրենց մասնագիտական ինքնությունը
- ստեղծել մասնագիտական որակավորման չափորոշիչները, վերահսկել դրանց կիրառումն ու հետագա զարգացումը
- ներդրում ունենալ սոցիալական աշխատանքի գիտության և պրակտիկ գործունեության զարգացման գործընթացներում
- իրականացնել շահառուների շահերի պաշտպանություն



Harmonic Society” Armenian Association of Social Workers
«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական Կազմակերպություն

➤ ակտիվորեն աջակցել քաղաքականություն մշակողներին և սոցիալական ինստիտուտներին՝ երկրում հաստատելու սոցիալական արդարություն
Նախ, հավաքվեցին սոցիալական աշխատանքի ինստիտուտի զարգացմամբ մտահոգված մասնագետներ և հանձն առան Աշխատանքային ներքին կանոնակարգի մշակումը:

2004-2005թթ ընթացքում կանոնակարգվեց նաև Սոցիալիստական կառուցվածքը՝ ստեղծելով Ժողով, Նախագահություն, Վարչություն, քարտուղարություն:

Կանոնադրության մեջ ֆիքսվեցին բոլորի պատկանություններն ու իրավունքները:

Սոցիալիստական խնդիրներից մեկը դարձավ նաև հաճախակի իրազեկման հանդիպումների կազմակերպումը, որից առաջինը մեկնարկեց մարտի 17-ին Երևանի պետական համալսարանում: Հրավիրվեցին պրակտիկ աշխատողներ, ներկայացուցիչներ պետական և ոչ պետական ոլորտներից, այլ շահագրգիռ անձինք: Հայաստանում դեռևս սոցիալական աշխատանքի՝ որպես մասնագիտության կարևորությունը դեռևս գիտակցված չէ հասարակության լայն զանգվածների կողմից, այդ է խնդիրը, որ հաճախ պետք է խոսվի մասնագիտության մասին, որպեսզի հնարավորինս իրազեկվի զանգվածային լրատվության միջոցների կողմից:

Վերջին 2 տարվա ընթացքում «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիան դարձավ Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի անդամ (IFSW): Սա ևս շատ կարևոր ձեռքբերում էր, քանի որ հնարավորություն է ընձեռում կատարել փորձի փոխանակություն, մշտապես տեղեկացված լինել մասնագիտության գլոբալ տենդենցներին:

Անհրաժեշտ էմ համարում նշել, որ Ֆեդերացիան համաշխարհային կազմակերպություն է, որը ներկայացնում է սոցիալական աշխատողների 90 ազգային ասոցիացիաներ, ովքեր կիսում են իրենց մեծ ցանկությունը պայքարել «սոցիալական աշխատանքի խթանման միջոցով սոցիալական արդարության, մարդու իրավունքների և սոցիալական զարգացման համար, ինչպես նաև լավագույն փորձի մոդելների և միջազգային համագործակցության հեշտացման համար»: Ֆեդերացիան



Harmonic Society” Armenian Association of Social Workers
«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա

ունի նաև պաշտոնական խորհրդատվական ստատուս՝ Միացյալ Ազգերի և այլ համաշխարհային կառույցների հետ:

Այս ժամանակահատվածում Ասոցիացիայի վարչությունը մշակել է նաև 2007-2011թթ Կայացման ռազմավարական ծրագիր, որը կցվում է հաշվետվությանը:

Ամփոփելով՝ կարիք էմ համարում ընդգծել, որ Ասոցիացիային արդեն անդամակցել է 30 անդամ, ինչպես տարբեր կազմակերպություններից, այնպես էլ համալսարանից:

Շնորհակալություն

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիայի
նախագահ

Միրա Անտոնյան